ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐՄԵՆԻ

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2021

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

ГЕВОРГЯН ТАТЕВИК АРМЕНОВНА

УГОЛОВНО-ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ СОВОКУПНОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.05 – “Уголовное право и криминология; уголовно-исполнительное право”

ЕРЕВАН – 2021

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Գաբուզյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ս. Վ. Առաքելյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Ա. Հ. Օսիկյան**

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ Ոստիկանության Կրթահամալիր

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2021 թվականի ապրիլի 22-ին, ժամը 14^{30}-ին ՀՀ ԲՈԿ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի մարտի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոց. **Տ. Հ. Սուջյան**

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор **А. А. Габузян**

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **С. В. Аракелян**

кандидат юридических наук **А. А. Осикян**

Ведущая организация: **Образовательный комплекс полиции РА**

Защита диссертации состоится 22-ого апреля 2021 г. в 14^{30} часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 5-ого марта 2021 г.

Ученый секретарь специализированного совета: кандидат юрид. наук, доцент **Т. О. Суджян**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությունը կախված է ոչ միայն հիմնավորված կրիմինալոգիական, այլև քրեաիրավական միջոցառումներից: Հանրորեն վտանգավոր արարքների ճիշտ որակումը, հանցագործությունների համար արդարացի և հիմնավորված պատիժների նախատեսումը, հանցակազմերի հիմնավորված և հստակ օրենսդրական ձևակերպումը, հանցագործությունների որակման որոշ հիմնարար կանոնների օրենսդրական սահմանումները կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայի և օրենսդրության կատարելագործմանը, և վերջին հաշվով, հանցագործությունների դեմ պայքարի արդյունավետությանը:

Հանցագործությունների որակման բարդությունները հաճախ կապված են հանցագործությունների բազմակիության և դրա տեսակ համարվող հանցագործությունների համակցության հետ: Հանցագործությունեի բազմակիության հետ կապված են մի շարք խնդրահարույց հարցեր, որոնք վերջին հաշվով կարող են հանգեցնել արարքների ոչ ճիշտ որակման: Մասնավորապես, խնդրահարույց են եզակի բարդ հանցագործությունը հանցագործությունների բազմակիությունից և մասնավորապես համակցությունից, համակցության տեսակները միմյանցից սահմանազատելու, բազմակիության տեսակների, բարդ հանցագործությունների դեպքում արարքների որակման, բարդ հանցագործությունեի օրենսդրական ձևակերպման, հանցագործությունների համակցության դեպքում վերջական պատիժը որոշելու հարցերը:

Քրեական օրենսդրությունը չի պարունակում հանցագործությունների բազմակիության հասկացությունը, հանցագործությունների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքերում արարքների որակման կանոնները, մեր կարծիքով ոչ ճիշտ է սահմանում հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժը որոշելու կանոնը:

Հարկ է նշել, որ այս հարցերից շատերը կարգավորվել են ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում: Այնուամնայնիվ, այդ կարգավորումները

քննարկման կարիք ունեն, բացի այդ հանցագործությունների համակցության հետ կապված, նշված հարցերը չեն դադարել խնդրահարույց լինելուց, որովհետև քրեական իրավունքի տեսության մեջ դրանց վերաբերյալ միասնական և միանշանակ դիրքորոշում չի ձևավորվել: Վերոգրյալը պայմանավորում է ընտրված թեմայի արդիականությունը:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտը հանցագործությունների բազմակիության, մասնավորապես հանցագործությունների համակցության օրենսդրական կարգավորման, հանցագործությունների համակցության դեպքում հանցագործությունների որակման հետ կապված հասարակական հարաբերություններն են: Հետազոտության առարկան հանցագործությունների համակցությունը կարգավորող իրավական նորմերն են, տեսական դրույթներն ու իրավակիրառ պրակտիկան:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը հանցագործությունների համակցության օրենսդրական, տեսական և իրավակիրառ խնդիրների վերլուծությունն է և դրա հիման վրա քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակումը: Այդ նպատակին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

– ուսումնասիրել հանցագործությունների բազմակիությունը որպես քրեաիրավական ինստիտուտ, բարդ եզակի հանցագործությունների տարբեր տեսակներից դրա սահմանազատման հարցը,

– բացահայտել քրեական իրավունքի տեսության և օրենսդրության մեջ հանցագործությունների բազմակիության տեսակների խնդիրը,

– վեր հանել հանցագործությունների համակցության և դրա տեսակների հիմնախնդիրները, արարքների որակման առանձնահատկությունները հանցագործությունների համակցության որոշ դեպքերում,

– ուսումնասիրել բարդ, եզակի հանցագործությունների օրենսդրական ձևակերպման, դրանց դեպքում արարքների ճիշտ որակման խնդիրները,

– բացահայտել հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժը որոշելու՝ գործող օրենսդրությամբ առկա թերությունը,

– համեմատահիրավական վերլուծության ենթարկել հանցագործությունների համակցության դեպքում վերջնական պատիժը որոշելու Արցախի Հանրապետության և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության նորմերը,

– կատարված հետազոտության արդյունքների հիման վրա առաջարկություններ մշակել՝ ուղղված քրեական օրենսդրության կատարելագործմանը:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը և տեսական հիմքը: Խորհրդային ժամանակաշրջանի և ռուսական ժամանակակից մասնագիտական գրականության մեջ հանցագործությունների բազմակիության և համակցությանն առնչվող հիմնախնդիրները հետազոտության առարկա են դարձել Ռ. Ռ. Գալիակբարովի, Վ. Ի. Պինչուկի, Զ. Ա. Նեզնամովայի, Վ. Ն. Կուդրյավցևի, Տ. Գ. Չերնենկոյի, Դ, Ս. Չիկինի, Ն. Ֆ. Կուզնեցովայի, Վ. Պ. Մալկովի գիտական աշխատություններում: Հանցագործությունների բազմակիության և համակցության առանձին հարցեր քննարկման առարկա են դարձել Մ. Վ. Գրիգորյանի, Ս. Վ. Առաքելյանի, Ս. Ս. Ավետիսյանի, Ա. Մելիքսեթյանի, Պ. Վ. Մկրտչյանի, Ա. Ռ. Մարգարյանի, Ժ. Ա. Ստեփանյանի, Ա. Ա. Գերցենզոնի, Ս. Ա. Սիլաևի և այլ գիտնականների աշխատություններում:

Այդ աշխատությունների շրջանակներում կատարված հետազոտություններն անխոս կարևոր նշանակություն ունեն հանցագործությունների համակցության հիմնախնդիրների վերհանման և լուծման գործում: Չնայած վերոնշյալին՝ հանցագործությունների բազմակիության և, մասնավորապես, համակցության հետ կապված մի շարք հիմնախնդիրներ միանշանակ լուծում չեն ստացել, մնում են խիստ արդիական և հետագա գիտական հետազոտության կարիք են զգում:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության իրավական հիմքն են կազմել ԱՀ և ՀՀ քրեական օրենսգրքերը, Ռուսաստանի, Ուզբեկստանի, Ղազախստանի, Ուկրաինայի, Շվեյցարիա-

յի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Իսպանիայի քրեական օրենսգրքերը: Հետազոտության փորձառական հիմքն են կազմել հանցագործությունների բազմակիության և համակցության ինստիտուտներին առնչվող ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները, ինչպես նաև՝ ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանների 62 դատավճիռները:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում կիրառվել են անալիզի և սինթեզի, պատմաիրավական, համեմատաիրավական, համակարգակառուցվածքային մեթոդները, ինչպես նաև կատարվել է դատական ակտերի ուսումնասիրություն:

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթն այն է, որ Արցախի քրեական իրավունքի տեսության մեջ առաջին անգամ փորձ է արվել իրականացնելու հանցագործությունների բազմակիության և համակցության տեսական և գործնական հիմնախնդիրների բազմակողմանի և համընդգրկուն վերլուծություն: Հետազոտության արդյունքներով կատարվել են տեսական եզրահանգումներ և ներկայացվել են օրենսդրական առաջարկներ:

Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նաև պաշտպանության ներկայացվող դրույթներում:

Պաշտպանության ներկայացվող դրույթները.

1. Այլ հանցանքի կատարումը չպետք է նախատեսվի որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք. այդ դեպքում, եթե հանցանքը կատարվի մեկ այլ հանցանքի հետ զուգորդված, ապա արարքը բնականաբար կորակվի համակցությամբ և խնդիրներ չեն առաջանա: Խնդիր չի առաջանա նաև նրա հետ կապված, թե երբ է արարքը անհրաժեշտ որակել համակցությամբ և երբ որպես մեկ միասնական հանցանք: Ինչ վերաբերում է այն դեպքերին, երբ այլ հանցանքի կատարումը նախատեսվում է որպես հիմնական հանզակազմի հատկանիշ, ապա հարցի լուծումն այն է, որ սանկցիան կառուցելիս այդպիսի հանցակազմով հանցանքի համար ավելի խիստ պատիժ նախատեսվի, քան հանցակազմի մասը կազմող հանցանքի կամ հանցանքների համար: Նման դեպքերում հասարակ հանցակազմի մասը կազմող հանցանքները կկլանվեն հիմնական, հասարակ հանցակազմի մեջ և ինքնուրույն չեն որակվի իսկ, եթե կատարվեն ծանրացնող կամ առավել ծանրացնող հանգամանքներով, որի համար ավելի

խիստ պատիժ է նախատեսված, քան հիմնական հանցագործության, այսինքն՝ ամբողջի համար, ապա դա ինքնուրույն կորակվի, այսինքն՝ առկա կլինի համակցություն:

2. Հանցագործությունների համակցությամբ պետք է որակվի արարքը բոլոր այն դեպքերում, երբ առկա են մեկից ավելի տուժողներ, անկախ նրանից թե ինչ բնույթի վնաս է պատճառվել տուժողներից յուրաքանչյուրին, եթե իհարկե բացակայում է քրեաիրավական նորմերի մրցակցությունը: Այս կանոնը գործում է իհարկե այն դեպքում, երբ տուժողները միասեռ են: Տարասեռ տուժողների դեպքում արարքը միանշանակ պետք է որակել համակցությամբ՝ անկախ նրանից որևէ տուժողի վնաս պատճառելը նախատեսված է որպես ծանրանող հանգամանք, թե ոչ, այսինքն՝ այս դեպքերում մրցակցությունը չի գործում: Նույն կանոնը պետք է գործի նաև անզգուշությամբ կատարվող հանցագործությունների կապակցությամբ:

3. Հանցագործությունների իդեալական համակցությունը առկա է նաև միևնույն հոդվածի տարբեր մասերով նախատեսված հանցանքները կատարելու դեպքում, իսկ ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագիծը օրենք դառնալուց հետո՝ նաև միևնույն հոդվածի միևնույն մասով նախատեսված հանցանքներ կատարելու դեպքում:

4. Այն դեպքերում, երբ մի հանցանքի կատարումը անխուսափելիորեն պարունակում է մեկ այլ հանցանքի հատկանիշներ, ապա արարքը պետք է որակվի համակցությամբ, եթե իհարկե չկան մրցակցության հատկանիշներ:

5. Հանցագործությունների համակցությամբ վերջնական պատիժը որոշելիս պետք է առաջնորդվել կատարված հանցանքներից ամենածանրի համար նախատեսված առավելագույն պատժաչափով, բացառությամբ այն դեպքերի, երբ հանցագործությունների համակցությունն ընդգրկում է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ կապված երկու կամ ավելի առանձնապես ծանր հանցանքներ: Այդ դեպքում դատարանը կարող է նաև դուրս գալ յուրաքանչյուր առանձին հանցատեսակի համար սահմանված առավելագույն պատժաչափից: Հանցանքների համակցությանը ճիշտ իրավական գնահատական տալու համար անհրաժեշտ է ձևափոխել ԼՂՀ քր. օր.-ի 64 հոդվածը և վերախմբագրել հետևյալ կերպ.

Հոդված 64. Պատիժ նշանակելը հանցանքների համակցությամբ

1. Հանցանքների համակցությամբ յուրաքանչյուր հանցագործության համար առանձին պատիժ (հիմնական և լրացուցիչ) նշանակելով՝ դատարանը վերջնական պատիժը որոշում է նշանակված պատիժները լրիվ կամ մասնակիորեն գումարելու միջոցով:

2. Հանցանքների համակցության դեպքում ազատազրկման ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել կատարված հանցանքներից առավել ծանրի ծանրացնող, իսկ եթե առկա են առավել ծանրացնող հանգամանքներ, ապա դրանց համար նախատեսված պատժի առավելագույն սահմանը:

3. Եթե հանցագործությունների համակցությունն ընդգրկում է դիտավորությամբ կյանքից զրկելու հետ կապված երկու կամ ավելի առանձնապես ծանր հանցանքներ, ապա դատարանը, հաշվի առնելով հանցագործությունների շարժառիթը, նպատակը, եղանակը և հանցավոր մտադրության իրականացման աստիճանը, կարող է վերջնական պատիժ որոշել ցմահ ազատազրկումը, եթե, նույնիսկ, կատարված հանցանքներից ոչ մեկի համար սույն օրենսգրքի Հատուկ մասի հոդվածի սանկցիայով դա նախատեսված չէ:

4. Եթե համակցության մեջ մտնող հանցանքներից մեկի համար դատարանը նշանակում է ցմահ ազատազրկում, ապա դա համարվում է վերջնական պատիժ:

5. Այլ պատիժների ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը:

6. Այն հանգամանքների շարքում, որոնք հիմք են հանդիսանում պատիժը պայմանականորեն չկիրառելը վերացնելու համար, նշված չէ այնպիսի հիմք, երբ պարզվում է, որ պայմանական դատապարտվածը մինչև դատապարտվելը կատարել է ևս մեկ հանցանք: Տվյալ իրավիճակին օրենսդրական լուծում կարող է տրվել, եթե քր.օր.-ի 69 հոդվածի 8-րդ մասով սահմանվի հետևյալ դրույթը.

«Եթե պարզվի, որ պայմանական դատապարտված անձը մինչև դատավճիռ կայացնելը կատարել է ևս մեկ միջին ծանրության, ծանր կամ ա-

ռանձնապես ծանր դիտավորյալ հանցանք, ապա դատարանը վերացնում է պատիժը պայմանականորեն չկիրառելը և պատիժ է նշանակում սույն օրենսգրքի 64 հոդվածի կանոններին համաձայն»:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական նշանակությունը կայանում է նրանում, որ այն արցախյան քրեական իրավունքում հանցագործությունների համակցության հիմնախնդիրների վերաբերյալ կատարված առաջին համալիր հետազոտությունն է, որի արդյունքները կարող են օգտագործվել հետագա գիտական ուսումնասիրություններում: Հետազոտության գործնական նշանակությունն այն է, որ դրա արդյունքները կարող են օգտագործվել քրեական օրենսդրության կատարելագործմանն ուղղված օրինաստեղծ գործունեության ընթացքում, իրավակիրառ պրակտիկայում, ինչպես նաև ուսումնական գործընթացում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի քրեական իրավունքի ամբիոնում, ներկայացվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտաժողովներում, ինչպես նաև տեղ են գտել հեղինակի կողմից ատենախոսության թեմայով հրապարակված և դրա բովանդակությունն արտացոլող գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլխից, որոնք ներառում են ութ պարագրաֆ, եզրակացությունից և օգտագործված իրավական ակտերի ու գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում ներկայացվել են հետազոտության թեմայի արդիականությունը, մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակն ու խնդիրները, հետազոտության մեթոդաբանական, տեսական, իրավական և փորձառական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող դրույթները:

«ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԶՄԱԿԻՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ» վերտառությունը կրող **1-ին գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործությունների բազմակիության ինստիտուտը քրեական իրավունքի տեսության մեջ» վերտառությամբ 1.1 պարագրաֆում ուսումնասիրվել է հանցագործությունների բազմակիության իրավական պատմությունը, ինչպես նաև մի շարք քրեագետների կարծիքներ՝ բազմակիության հասկացության վերաբերյալ: Ընդգծվել է, որ հանցագործությունների որակման համար կարևոր նշանակություն ունի հանցագործության բազմակիության տարբերակումը մեկ ամբողջական հանցագործությունից:

«Հանցագործությունների բազմակիության տեսակները» վերտառությամբ 1.2 պարագրաֆում հեղինակը մատնանշել է բազմակիության տեսակների հասկացության գիտական և գործնական հիմնախնդիրները: Դատական պրակտիկայում հաճախ են հանդիպում այնպիսի դեպքեր, երբ անձը կատարում է երկու և ավելի հանցանքներ, մասնավորապես՝ կրկնում է միևնույն հանցագործությունը, կա՛մ միաժամանակ կատարում է տարբեր հանցագործություններ, կա՛մ մեկ արարքով կատարում է մի քանի ինքնուրույն հանցակազմ պարունակող հանցագործություններ, կա՛մ անձի կողմից հանցագործություն է կատարվում այն ժամանակ, երբ նախորդ կատարածի համար դատվածությունը դեռևս մարված կամ հանված չէ: Ինչևէ, նման դեպքերը կարող են բազմազան լինել, սակայն կարևորն այն է, որ դրանք ստանան համապատասխան քրեաիրավական գնահատական՝ կապված դրանց որակման և պատիժ նշանակելու առանձնահատկությունների հետ:

Օրենսդրական բարեփոխումների հետևանքով քրեական օրենսդրության մեջ, որպես հանցագործությունների բազմակիության տեսակներ, մնացին հանցագործությունների համակցությունը և ռեցիդիվը, ինչը, հեղինակի կարծիքով, հիմնավորված է և թույլ է տալիս ապահովելու արդարության սկզբունքի իրագործումը:

«ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՏԵՍԱԿՆԵՐԸ» վերտառությունը կրող **2-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործությունների համակցության հասկացությունը» վերնագրով 2.1 պարագրաֆում հեղինակը վերհանել է գործող օրենսդրությամբ սահմանված հանցագործությունների համակցության հասկացության առանձնահատկությունները, ինչպես նաև պրակտիկայում դրա հետ կապված մի շարք հարցեր:

«Իդեալական համակցություն և ռեալ կամ իրական համակցություն» վերտառությամբ 2.2 պարագրաֆի շրջանակներում կատարված տեսական գրականության և դատական պրակտիայի ուսումնասիրության արդյունքներով հեղինակն առանձնացրել է համակցության յուրաքանչյուր տեսակի այն կոնկրետ պայմանները, առանձնահատկությունները, որոնց պարզումը կարևոր գործնական նշանակություն ունի:

«ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿՈՒՄԸ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԱՐԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՊՔՈՒՄ, ՔՐԵԱՒՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆ» վերտառությունը կրող **3-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործությունների համակցությունը և բարդ հանցագործությունների որակումը» վերտառությամբ 3.1 պարագրաֆում հեղինակը նշել է, որ հանցագործությունների համակցության դեպքում արարքի որակման դժվարությունները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ քրեական օրենսգրքում առկա են բարդեցված օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերով մի շարք հանցատեսակներ, որոնց օբյեկտիվ կողմը կազմող արարքներից յուրաքանչյուրն առանձին-առանձին վերցված պարունակում է ինքնուրույն հանցագործության հատկանիշներ, որոնք էլ որոշակի խնդիրներ են առաջանում այն հարցում, թե արդյոք կատարվածը անհրաժեշտ է համակցությամբ որակել, թե համարել մեկ ամբողջական հանցագործություն և որակել մեկ հոդվածով: Հանգամանալից ուսումնասիրության արդյունքում՝ հեղինակը հանգել է հետևյալ եզրակացության.

1. հանցանք - եղանակը որպես հիմնական հանցակազմի հատկանիշ պետք է նախատեսվի միայն ավելի ծանր հանցագործության հանցակազմում,

2. եթե հանցանք-եղանակը հիմնական հանցակազմի հատկանիշ է և նախատեսված է որպես մեկ այլ՝ ավելի ծանր հանցանքի կատարման եղանակ, ապա այդ դեպքում այն առանձին չպետք է որակվի,

3. եթե հանցանք եղանակը նախատեսված է որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, ապա դրա համար պետք է նախատեսվի ավելի խիստ պատիժ, քան այդ նույն հանցանք-եղանակի համար, որպես ինքնուրույն հանցագործության. այդ դեպքում նույնպես համակցությունը բացակայում է:

«Քրեաիրավական նորմերի մրցակցությունը» վերտառությամբ 3.2 պարագրաֆում հեղինակն ուսումնասիրել է այն հարցերը, որոնք կարող են ծագել, երբ կատարվում է մեկ արարք, որը միաժամանակ պարունակում է քրեական օրենսգրքի Հատուկ մասի երկու կամ ավելի հոդվածներով նախատեսված հանցագործության հատկանիշներ: Տվյալ դեպքում իրավակիրառողն առնչվում է քրեաիրավական երկու ինստիտուտների հետ՝ հանցագործությունների համակցություն և քրեաիրավական նորմերի մրցակցություն: Նման պարագայում առաջանում են արարքի որակման համար էական նշանակություն ունեցող որոշ հարցեր՝ 1. առկա է հանցանքների համակցություն, թե քրեաիրավական նորմերի մրցակցություն, 2. եթե առկա է հանցանքների համակցություն, ապա հանցանքների համակցության որ տեսակն է առկա, իսկ եթե առկա է քրեաիրավական նորմերի մրցակցություն, ապա ինչպիսին են նորմերի մրցակցության այդ տեսակի պայմաններում արարքի որակման առանձնահատկությունները: Հեղինակը նշել է, որ թե ՀՀ, թե ԼՂՀ քրեական օրենսգրքերը չեն սահմանում, թե որ դեպքում է առկա նորմերի մրցակցություն, որ դեպքում՝ հանցագործությունների համակցություն:

Փաստորեն, ամեն անգամ արարքի որակման ժամանակ իրավակիրառողը պետք է հիմնվի իր իրավագիտակցության վրա և դիմի դատական պրակտիկային կամ քրեական իրավունքի տեսությանը: Հեղինակի կարծիքով ավելի նպատակահարմար կլիներ օրենսդրորեն կարգավորել այս հարցը, մասնավորապես, քրեական օրենսգրքում սահմանվեր հանցանքների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության տարբերակման հստակ դրույթներ, ինչպես նաև սահմանվեր քրեաիրա-

վական նորմերի մրցակցության հասկացությունը և տեսակները սահմանող նորմ:

«ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՊԱՏԻԺ ՆՇԱՆԱԿԵԼԸ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԴԱՏԱԿԱՆ ՊՐԱԿԻԿԱՆ» վերտառությունը կրող **4-րդ գլուխը** բաղկացած է երկու պարագրաֆից:

«Հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու ընդհանուր դրույթները և դրանց կիրառման առանձնահատկությունները» վերնագրով 4.1 պարագրաֆում հեղինակը ուսումնասիրել է հանցագործությունների համակցությամբ պատիժ նշանակելու սկզբունքները, համեմատաիրավական հետազոտության է ենթարկել Ռուսաստանի, Գերմանիայի, Ֆրանսիայի, Շվեյցարիայի, Իսպանիայի քրեական օրենսգրքերում առկա նորմերը: Կատարված հետազոտության արդյունքում հեղինակն առանձանցրել է արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ իրավական կարգավորման հիմնական տարբերակները և մատնանշել է հայրենական քրեական օրենսդրության համար առավել նախապատվելի տարբերակը:

«Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու և արարքների որակաման առանձնահատկություններն Արցախի Հանրապետության դատական պրակտիկայում» վերտառությամբ 4.2 պարագրաֆի շրջանակներում հանցագործությունների համակցությամբ արարքները որակելու և պատիժ նշանակելու Արցախի դատական պրակտիկան ուսումնասիրելու համար հեղինակի կողմից ուսումնասիրվել են 62 դատական գործեր, կատարվել են մի շարք փորձագիտական հարցումներ: Հեղինակը հանգել է եզրակացության, որ հանցագործությունների համակցության դեպքում արարքի որակման ու պատիժ նշանակելու հարցերը Արցախի դատական պրակտիկայում հիմնականում ճիշտ են կիրառվում, չհաշված առանձին բացառություններ: Հիմնական խնդիրը օրենսդրական կարգավորումների մեջ է, ինչը հետագա խոր հետազոտությունների անհրաժեշտություն է առաջացնում:

Եզրակացությունում, ի լրումն պաշտպանության ներկայացվող դրույթների, ներկայացվել են հետևյալ եզրահանգումներն ու առաջարկությունները.

1. Հանցագործությունների բազմակիություն է միևնույն անձի կողմից երկու կամ ավելի ինքնուրույն հանցակազմ պարունակող արարքների կատարումը, եթե չեն վերացել քրեաիրավական կամ քրեադատավարական հետևանքները. անձը չի ազատվել պատասխանատվությունից քրեական օրենքով սահմանված կարգով կամ չի մարվել կամ հանվել դատվածությունը, կատարված երկու հանցագործությունների կապակցությամբ առկա է քրեական վարույթը կամ քրեական հետապնդումը իրականացնելու քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված հիմքը:

2. Եթե սկսված հանցագործությունը վերաճում է մեկ այլ հանցագործության, ապա արարքները պետք է որակվեն որպես մեկ միասնական հանցագրծություն այն դեպքում, երբ սկսած հանցագործությունը վերաճածի բաղկացուցիչ մասն է, դրա մի փուլը և առկա է միասնական դիտավորություն կամ սկսածը դեռևս չի ավարտվել և վերաճել է միևնույն հանցակազմը ներկայացնող մեկ այլ հանցատեսակի: Մնացած դեպքերում արարքները պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

3. Շարունակվող հանցագործության ավարտի կապակցությամբ ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը ճիշտ չէ: Ըստ Վճռաբեկ դատարանի՝ շարունակվող հանցագործությունն *ավարտված է համարվում հանցավորի դիտավորությամբ ընդգրկված վերջին արարքի կատարման պահից:* Սակայն, շարունակվող հանցագործությունը պետք է ավարտված համարվի այն պահից, երբ հանցավորը իրականացում է իր դիտավորությունը, հակառակ դեպքում արարքը պետք է որակվի որպես հանցափորձ:

4. Իրավաբանական տեսանկյունից նույնական կամ միաբնույթ հանցանքների կատարումը հնարավոր է շարունակվող հանցագործության բացառիկ դեպքերում: Մեկ միասնական դիտավորությամբ կատարվող և մեկ եղանակով սկսված հափշտակության դեպքում, երբ այն վեր է ածվում այլ եղանակով հափշտակության, հափշտակության չափերը կարելի է գումարել: Միաբնույթ հանցագործությունների դեպքում շարունակվող հանցագործությունն առկա է այն դեպքում, երբ կատարվում է նույն աղբյուրց, ուղղված է նույն օբյեկտի դեմ:

5. ՀՀ քրեական նոր օրենսգրքի նախագծում շարունակվող հանցագործության ինստիտուտը վերացվել է: Եթե որոշ դեպքերում շարունկվող հանցագործության առկայությունը դժվար է հաստատել, ապա, դա դեռևս

այս ինստիտուտը վերացնելու հիմք չէ: Այս ինստուտը վերացնելը շատ դեպքերում ավելի մեծ բարդությունների ու անարդար իրավիճակների կարող է հանգեցնել: Նախ, շարունակվող հանցագործությունը իրողություն է. այն օբյեկտիվորեն առկա է: Բացի այդ, ինչպես որակել արարքը օրինակ այն դեպքում, երբ ցանկանալով հափշտակել մեքենան հանցավորը այն մասերի է բաժանում և մաս-մաս է հափշտակում. Արդյոք ճիշտ կլինի մի քանի հափշտակություն որակել արարքը: Կարծում ենք, որ շարունակվող հանցագործության ինստիտուտը անհրաժեշտ է պահպանել, իսկ այն դեպքերում, երբ շարունակվող հանցագործության փաստը չի ապացուցվի, ապա արարքը պետք է պարզապես որակել համակցությամբ:

6. Ի տարբերություն դիտավորյալ շարունակվող հանցագործության, որի հիմքում ընկած է մեկ նպատակին հասնելու հանցավորի միասնական դիտավորության առկայությունը, անզգույշ շարունակվող հանցագործությունը բնութագրում են հանցավորի մոտ երևույթի ընկալման միասնական սխալով: Այլ կերպ ասած անհատի սխալ պատկերացումները երևույթի վերաբերյալ, որի արդյունքում վերջինիս դրսևորած պարբերական վարքագիծը պարունակում է այս կամ այն անզգույշ հանցագործության հանցակազմի հատկանիշները, պետք է դիտվեն որպես մեկ հանցագործություն և որակվեն եզակի բարդ հանցագործության կանոններով՝ անկախ այն հանգամանքից, կատարված արարքներից յուրաքանչյուրը պարունակու՞մ է տվյալ հոդվածով նկարագրված անզգույշ հանցագործության հանցակազմի հատկանիշները, թե՞ ոչ: Նման դեպքերում յուրաքանչյուր արարք ինքնուրույն քրեաիրավական գնահատականի չպետք է արժանանա, այլ պետք է որակվի որպես մեկ հանցագործություն: Բանն այն է, որ նման դեպքերում յուրաքանչյուր արարք, յուրաքանչյուր անգործություն անձի ընդհանուր, միասնական դիրքորոշման հետևանքն է՝ որոշակի շարժառիթով կամ նպատակով (ծուլություն, իրեն նեղություն չտալու ցանկություն և այլն) չկատարել իր վրա դրված պարտականությունները, այլ կերպ ասած որոշակի հակաիրավական վարքագիծ դրսևորել:

7. Հանցագործության համար դատապարտվելուց հետո տևող հանցագործության շարունակական իրականացումը պետք է արժանանա ինքնուրույն քրեաիրավական գնահատականի:

8. Հանցագործությունների համակցությունը բացակայում է երկընտրելի օբյեկտիվ կողմ ունեցող հանցակազմերի իրականացման այն դեպքում, երբ միևնույն անձը իրականացնում է այդ հանցակազմի օբյեկտիվ կողմի մեջ մտնող մեկից ավելի արարքներ, որոնք կատարվել են միասնական դիտավորությամբ:

9. Առաջարկվում է հրաժարվել բոլոր այն հանցակազմերից, երբ ավելի ծանր հետևանքների նկատմամբ, որոնք ծանրացնող հանգամանքով հանցակազմի հատկանիշ են, դրսևորվում է անզգուշություն և դա ինքնուրույն հանցատեսակ է, թողնելով, որ արարքը նման դեպքերում որակվի համակցությամբ:

10. Եթե սկսված հանցագործությունը վերաճում է մեկ այլ հանցագործության, ապա արարքները որակվում են որպես մեկ միասնական հանցագործություն այն դեպքում, երբ սկսած հանցագործությունը վերաճածի բաղկացուցիչ մասն է, դրա մի փուլը և առկա է միասնական դիտավորություն կամ սկսածը դեռևս չի ավարտվել և վերաճել է միևնույն հանցակազմը ներկայացնող մեկ այլ հանցատեսակի: Մնացած դեպքերում արարքները պետք է որակել հանցագործությունների համակցությամբ:

11. Երբ տուժողի համապատասխան վարքն ապահովելու նպատակով հանցավորը բռնություն է գործադրում երրորդ անձի նկատմամբ, կատարվածը պահանջում է լրացուցիչ որակում՝ երրորդ անձի նկատմամբ հանցավոր բռնություն գործադրելու մասով:

12. Երբ հանցավորը միևնույն տուժողի կամ առարկայի դեմ սկզբում կատարում է չավարտված հանցագործություն (հանցափորձ), այնուհետև ավարտում է հանցանքը՝ իրագործելով իր հանցավոր դիտավորությունը, արարքները պետք է որակվեն որպես մեկ հանցագործություն: Նման դեպքերում բազմակիությունը բացակայում է:

13. Այն բոլոր դեպքերում, երբ որևէ հանցանքի կատարումը զուգակցվում է մեկ այլ հանցանքի կատարմամբ, եթե դա իհարկե նախատեսված չի որպես տվյալ հանցակազմի հատկանիշ, ապա արարքը պետք է որակել համակցությամբ:

14. Հանցանք – եղանակը որպես հիմնական հանցակազմի հատկանիշ պետք է նախատեսվի միայն ավելի ծանր հանցագործության հանցակազմում: Եթե հանցանք-եղանակը հիմնական հանցակազմի հատկանիշ է

և նախատեսված է որպես մեկ այլ՝ ավելի ծանր հանցանքի կատարման եղանակ, ապա այդ դեպքում այն առանձին չպետք է որակվի: Եթե հանցանք եղանակը նախատեսված է որպես հանցակազմի ծանրացնող հանգամանք, ապա դրա համար պետք է նախատեսվի ավելի խիստ պատիժ, քան այդ նույն հանցանք-եղանակի համար, որպես ինքնուրույն հանցագործության. այդ դեպքում նույնպես համակցությունը բացակայում է:

15. Իրավաբանական գրականության մեջ այն կարծիքն է արտահայտվել, թե իդեալական համակցությունը հնարավոր է նաև իրականացնել մեկից ավելի արարքներով, պայմանով, որ դրացից առնվազն մեկում պարունակվում են կատարված բոլոր համցակազմերի հատկանիշները: Սակայն իդեալական համակցությունը չի կարող իրականացվեկ մեկից ավելի արարքներով, որովհետև մեկից ավելի արարքները կատարված բոլոր հանցակազմերի հատկանիշները չեն կարող պարունակել:

16. Նպատակահարմար կլիներ օրենսդրորեն կարգավորել քրեաիրավական նորմերի մրցակցության հարցը, մասնավորապես, քրեական օրենսգրքում սահմանվեր հանցանքների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության տարբերակման, քրեաիրավական նորմերի մրցակցության դեպքում արարքի որակման հստակ դրույթներ, ինչպես նաև սահմանվեր քրեաիրավական նորմերի մրցակցության հասկացությունը և տեսակները սահմանող նորմ:

17. Օրենսդրի կողմից չի սահմանվում համակցության դեպքում մյուս պատժատեսակների վերջնական ժամկետը կամ չափը: Պետք է սահմանել այնպիսի դրույթ, համաձայն որի ՝ <<այլ պատիժների ձևով վերջնական պատիժը չի կարող գերազանցել քրեական օրենսգրքի ընդհանուր մասով պատժի տվյալ տեսակի համար սահմանված առավելագույն ժամկետը կամ չափը>>:

18. Հանցագործությունների համակցության դեպքում արարքի որակման ու պատիժ նշանակելու հարցերը Արցախի դատական պրակտիկայում հիմնականում ճիշտ են կիրառվում, չհաշված առանձին բացառություններ: Հիմնական խնդիրը օրենսդրական կարգավորումների մեջ է, ինչը հետագա խոր հետազոտությունների անհրաժեշտություն է առաջացնում:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Գևորգյան Տ., «Հանցագործությունների համակցության և քրեաիրավական նորմերի մրցակցության հիմնահարցերը», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 1/2016, էջեր 294-297:

2. Գևորգյան Տ., «Հանցագործությունների բազմակիության հասկացությունն և տեսակները», Պետություն և իրավունք 4/74-2016, էջեր 90-102:

3. Գևորգան Տ., «Պատիժ նշանակելու սկզբունքները հանցագործությունների համակցության դեպքում», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու 1, էջեր 233-247:

4. Գևորգյան Տ., «Հանցագործությունների համակցության դեպքում պատիժ նշանակելու առանձնահատկություններն Արցախի Հանրապետության դատական պրակտիկայում», «Լրատու» գիտական հոդվածների պարբերական ժողովածու-2018, էջեր 42-52:

5. Գևորգյան Տ., «Հանցագործությունների համակցությունն և բաղկացական հանցագործությունների որակումը», Պետություն և իրավունք N 2 (87), Եր 2020, էջ 91-94:

6. Գևորգյան Տ., «Հանցագործությունների համակցությունն և բարդ հանցագործությունների որակումը», Արցախի պետական համալսարանի գիտական տեղեկագիր 1/2020, էջեր 263-270:

ГЕВОРГЯН ТАТЕВИК АРМЕНОВНА
УГОЛОВНО – ПРАВОВЫЕ ПРОБЛЕМЫ СОВОКУПНОСТИ ПРЕСТУПЛЕНИЙ

РЕЗЮМЕ

Совокупность преступлений - одна из важных уголовно-правовых проблем, связанная с решением целого ряда спорных вопросов, возникающих в правоприменительной практике. К их числу относятся, в частности, вопросы отграничения совокупности от единичных сложных преступлений, правовой оценки содеянного, порядка применения особых правил назначения наказания, которые учитывали бы как сам факт наличия в действиях (бездействии) лица признаков двух или более преступлений, так и обусловленную этим обстоятельством повышенную общественную опасность личности виновного.

Актуальность исследования данной проблемы проистекает и из истории развития института множественности преступлений, частью которой является совокупность. В ранее действовавшем уголовном законодательстве этот институт был представлен значительным числом ее видов при отсутствии законодательного их определения. Совокупность преступлений при этом рассматривалась как часть проблемы назначения наказания. Ее понятие в законе также не определялось, а в теории уголовного права она по-разному интерпретировалась отдельными учеными, в той или иной мере исследовавшим и рассматриваемую проблему.

Новации, внесенные законами, требуют своего теоретического осмысления, выработки рекомендаций по правильному применению обновленного законодательства на практике, что также определяет актуальность настоящей диссертационной работы. Действующее законодательное регулирование не дает возможность решить некоторые спорные вопросы, касающиеся данной проблемы.

В качестве *объекта* исследования выступают общественные отношения, возникающие в связи с совершением одним лицом двух и более преступлений, образующих, согласно уголовному закону, их совокупность.

Предметом исследования являются нормы уголовного права, определяющие понятие совокупности преступлений и регламентирующие порядок назначения наказания в случае установления ее признаков в преступной деятельности виновного лица.

В рамках диссертации автором было изучено историческое развитие законодательного определения совокупности преступлений, было проведено сравнительно-правовое исследование норм по уголовному законодательству Армении и зарубежных стран, выявлены особенности данного института, также были представлены законодательные предложения на основе проведенного исследования.

Правовой основой исследования послужили уголовные кодексы Республики Армения и Республики Арцах, уголовные кодексы России, Узбекистана, Казахстана, Украины, Швейцарии, Германии, Франции и Испании.

Эмпирическую базу исследования составили решения Конституционного суда Республики Армения, касающиеся институтов множественности и совокупности преступлений, а также 62 решения судов первой инстанции общей юрисдикции Республики Арцах..

Теоретической основой послужили работы известных ученых в области уголовного права Р.Р. Галиакбарова, В.Н. Кудрявцева, Н.Ф. Кузнецовой, Б.А. Куринова, В.П. Малкова, В.И. Пинчука, З.А. Незнамовой, Т.Г.Черненко, Д.С. Чикина. и др.

Научная новизна диссертации так же отражена в представленных на защиту положениях, а также в представленных в заключении выводах и предложениях.

Диссертация имеет не только теоретическое, но и практическое значение, так как представленные выводы и предложения могут быть использованы не только в научных исследованиях, но и в законотворческой деятельности, в правоприменительной практике и в учебном процессе.

Диссертация обсуждена на кафедре уголовного права ЕГУ. Основные положения диссертации отражены в опубликованных научных статьях автора.

GEVORGYAN TATEVIK ARMEN

CRIMINAL - LEGAL PROBLEMS OF THE AGGREGATE OF CRIMES

ABSTRACT

The aggregate of crimes is one of the important criminal-legal problems associated with the solution of a number of controversial issues arising in the law enforcement practice. These include, in particular, the issues of delimiting the aggregate from single complex crimes, the legal assessment of the offense, the procedure of the application of special rules for imposing punishment, which would take into account both the fact of the presence in the actions (inaction) of a person of signs of two or more crimes, and the increased social danger of the personality of the guilty person conditioned by this circumstance.

The topicality of the study of the given problem also proceeds from the history of the development of the institution of a plurality of crimes, and the aggregate is a part of it. In the earlier existing criminal legislation, the given institution has been represented by a significant number of its types in the absence of their legislative definition. At the same time, the aggregate of crimes has been considered as a part of the problem of sentencing. Its concept has not been defined in the law either, and in the theory of criminal law it has been interpreted in different ways by individual scientists who, to one degree or another, have investigated the problem under consideration.

The innovations introduced by the laws require their theoretical comprehension, the elaboration of recommendations on the correct application of the updated legislation in practice, which also determines the topicality of the present thesis. The current legislative regulation has not provided an opportunity to resolve some controversial issues related to the given problem.

The *object* of the research is the social relations arising in connection with the commission of two or more crimes by one person, which, according to the criminal law, form their aggregate.

The *subject* of the research is the norms of the criminal law that define the concept of the aggregate of crimes and regulate the procedure for imposing

punishment in case of establishing its features in the criminal activities of the guilty person.

Within the framework of the thesis, the author has studied the historical development of the legislative definition of the aggregate of crimes, has carried out the comparative-legal study of the norms of the criminal legislation of the Republic of Armenia and the foreign countries, has revealed the peculiarities of the given institution, as well as has presented the legislative proposals based on the conducted study.

The criminal codes of the Republic of Armenia and the Republic of Artsakh, as well as the criminal codes of Russia, Uzbekistan, Kazakhstan, Ukraine, Switzerland, Germany, France and Spain served as a legal basis of the research.

The empirical base of the research was formed by the decisions of the Court of Cassation of the Republic of Armenia concerning the institutions of plurality and the aggregate of crimes, as well as by 62 decisions of the courts of the first instance of general jurisdiction of the Republic of Artsakh.

The works of famous scientists in the field of the criminal law P.P. Galiakbarov, V.N. Kudryavtsev, N.F. Kuznetsova, B.A. Kurinov, V.P. Malkov, V.I. Pinchuk, Z.A. Neznamova, T.G. Chernenko, D.S. Chikin, and others became the theoretical basis of the research.

The scientific novelty of the thesis has been also reflected in the provisions presented for defense, as well as in the conclusions and proposals presented in the conclusion.

The thesis has both theoretical and practical significance, since the presented conclusions and proposals may be used not only in the scientific researches, but also in the lawmaking activities, in the law enforcement practice, as well as in the educational process.

The thesis has been discussed at the Chair of Criminal Law of the Yerevan State University. The main provisions of the thesis have been reflected in the published scientific articles of the author.